

Ք Ս Ա Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Մ Շ Ա Կ

Տարեկան գինը 10 բուրջի, կես տարվան 6 բուրջ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միամիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Redaction „Mschak“. Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ. Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Պ Ի Ր Գ Ի Ր Գ Ո Ր Ա Ր Ի Ր Ո Ւ Ն Ի

Գարիա Զաքարեան և Եղիսաբէթ Սարգսեան Միջոցառման Կոմիտէի անունով Մարիամ Յովհաննիսեան Երկայնաբազուկ-Սրբուհի անունը սրբի ցաւով յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջինը որդու, երկրորդը ամուսնու և երրորդը եղբոր՝

Մ Ե Լ Ք Ո Ն Յ Ո Վ Հ Ա Ն Ե Ն Ս Ե Ա Ն Մ Ի Ր Զ Ո Յ Ե Ա Ն Յ Ի

մահը: Ամբիճները լինում են ամեն օր, երկուցեան ժամը 6-ին, Օրթոճաղայի սեփական տան մէջ: Յուշարկաւորութիւնը լինելու է հինգշաբթի, սեպտեմբերի 24-ին, դէպի Վանքի մայր-կեղեցի, առաւօտեան ժամը 9-ին. թաղումը կը լինի Թէլէթի դիւղի տոնմական դամբարանում:

Մարիամ Սողոմոնեան Աղաբէգեանը իր որդեկրանցով և Սալուէ Միքայէլեան Իստամբուլեանը իր որդեկրանցով սրբի ցաւով յայտնում են բարեկամներին և ծանօթներին՝ առաջինը իր թանկագին ամուսնու, իսկ երկրորդը իր փեսայ՝

Գ Ի Ր Գ Ո Ր Ս Ա Ր Գ Ս Ե Ա Ն Ա Ղ Ա Բ Ե Գ Ե Ա Ն Ի

մահը: Յուշարկաւորութիւնը լինելու է չորեքշաբթի, ամսին 23-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից՝ Գրիբոյեդովկայա փողոց, տուն Զուբալովի № 20, դէպի Սողոմոն և Գեորգ եկեղեցի: Ամբիճը լինելու է այսօր, երեքշաբթի, երկուցեան ժամը 6-ին:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Աղբատութիւն և Բարոյականութիւն. Նորից անբերրութիւն. Նեմֆի-ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հեռագրիներ. Հայոց դպրոցների մասին. Մատենադարան. Ժողովրդի առողջութեան մասին. Նամակ Կարսից. Ներքին լուրեր. ԱՐՏՍՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գործերի դրութիւնը Փրանսիայում. Կրեական գործերը. Մայրագոյն Արեւելքում. Նամակ Աւստրիայից. Արտակարգ լուրեր. ՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ. ՀԵՌՄԱՆՆԵՐ. ԲՈՎԱՆՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Երեսնամյակի մեղաւոր:

ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ժողովրդական բարոյականութեան խընդ-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ի Ն Չ Ո Ր Վ Ե Ի Մ Ե Ղ Ա Ս Ի Ր

Գեղեցիկ և Լայնաձորի հովիտը, երբ ամառվայ արեգակը վերջին ճառագայթները խորտակում են չրջակայ լեռների վրա, շողջաղով ստորոտում կարկաչող առուակների վճիտ ջրերի մէջ: Սրանց ափերին բուսած գոյնզգոյն ծաղիկները, խնամարկելով դէպի ջուրը, կարծես, կամենում են զովայնից միջօրեայ ճառագայթների տապից նուազած գլխիկները: Գեղեցիկ է այդ հովիտը, երբ երեկոյան մեղմ հովիտը, սահելով կանաչ արտերի վրայով, աչկոտում է նրանց և կանաչագոյն ալիքներ սփռվելով մինչև լեռերի գագաթը, նմանեցնում են նրան մի կախարդական ծովի: Գեղեցիկ է նա, երբ լուսինը, դուրս գալով այդ ծովի յետեղի և պատանակով արծաթափայլ ամպերի կողքերը, սփռում է իր կախարհապատկառ ամպերից եկած գիւղացիների վրանները շուրջը և այդպիսով աղատում նրանց վրանները լուսաւորելու հողացողութիւնից: Հրաշալի է Լայնաձորի երեկոն, հեռուց լսվում է հովիտների սրկնի ջաղջոցներն ձայնը, որը նուազում է ջրղական զարնի: Խոտերի մեղմ սուսափելուն, միախառնվելով այդ մեղմիկին հետ, դիմելից տպաւորութիւն է գործում լրատող վրա:

Որքան բազումը պէտք է լինի այս հրաշալի բնութեան ծոցում ապրողը, կը բացականչի ամեն մէկը: Բայց չէ: Մարդ միանգամայն շուտում է, չը նկատելով վրանների շուրջը կենդանութեան նշոյլ անգամ: Ինչու չը պէտք է լսել դուր գիւղացի երիտասարդների ու օրիորդների ուրախ երգերը, մասնակցել նրանց պարը, բայց կայտառ պարերին, ինչու է ամեն տեղ մեռելային լուսութիւն սրկնի: Մի՞թէ կարող են ունենալ որ և է հոգս այստեղ առանձնացած գիւ-

րով զբաղվող մարդկանց համար շատ հետաքրքրական են այն հետազոտութիւնները, որոնք պարզում են բարոյականութեան վրա ազդող պատճառները: Այդ պատճառներից մէկն է՝ Ժողովրդի բարեկեցութեան աստիճանը: Գիտողութիւնները, օրինակ, ցոյց են տալիս, որ սովի տալիս ընկնում յանցանքները բազմապէս են: Իրա ապացոյցը մենք տեսնում ենք, ի միջի նայլոց, Հնդկաստանում, ուր սովը բռնկվում է սոսկալի կերպարանքով: Բո՛ւ՛րք էլ չըջանում, ուր Ժողոված են կանոնաւոր վիճակագրական տեղեկութիւնները, հաստատված է, որ յանցանքների թիւը

զացիները. մի՞թէ գէթ այստեղ՝ բնութեան ծոցում, նրանք չեն կարող վարել հանպիստ, անդորր կենքը: Ա՛յ. այստեղ էլ է հասել այն ձեռքը, որը ամեն տեղ ճնշում է նրանց, խանդաբեղով քնձկել բնութեան հրաշալիքներով:

II

Կէս դիւրեր էր. վրաններում բոլորը քնած էին. մի ձայն անգամ չէր լսվում. միայն քամին էր, որ սաստիկ սուլում էր: Եթէ մէկը ուշադրութեամբ ականջ դնէր, քամու սուլոցի միջից կը լսէր մի ինչ որ տարօրինակ ձայն, որը նմանում էր ծայրայեղ անբաղի դառն հառաչանքին: Եւ իրաւ, վրաններից մէկում հառաչում էին Լուսնի լուսով կարելի էր նկատել հետեւեակ պատկերը. թաղիքի վրա պառկած լալիս էր մի անտարդնաս աղջիկ, նրա մօտ նստած էր պառաւ մայրը. թէև վերջինի երեսին նկատելի էր սաստիկ վախ, բայց և այնպէս նա աշխատում էր միտնաբեղ աղջկան:

—Մի՛ լսար, Մարիամ ջան, Աստուած ողորմած է. նա չի թողնի որ դու ընկնես անօրէնի ձեռքը: Աղջիկը, կարծես, ուշադրութիւն չէր կարճնում ձոր խօսքերի վրա և շարունակում էր հեկեկալ: Նա մօտ տանն և եօթը տարեկան օրիորդ էր, խոշոր աչքերով, որոնք այժմ յուսահատութիւն էին արտայայտում. երկար գլխակները սքօղել էին նրա գեղեցիկ երեսի մի մասը և բարձր կուրծքը, որը սաստիկ բաբախում էր:

—Նի՞թէ իմանայիր, մայրիկ, թէ ինչ սասցին ինձ այսօր նրա երկու անուսթ ծառաները, մի ճար կը գտնէիր ազատելու դազանի ձիրաններից քո խնձճ Մարիամին. Վեր տեսնես, հպարտ հայուհի, որքան հեշտ է յաղթիլ քո կամակրութիւնը. այս գիշեր կեթ մենք կապացուցանենք այդքա: Ախր ես վաղուց էի նկատում, որ նա հետեւում է ինձ...

Կեռ մայրը ոչինչ չէր գտել պատասխանելու, երբ յանկարծ նրանց առաջ արձանացան երկու ոտքից մինչև գլուխ զննված մարդիկ: Մարիամը մի ճիւղ արձակեց և ուշաթափ կղաւ. նրանցից մէկը մօտեցաւ. նրան, բարձրացրեց ձեռքերի

սովի տարիներում շատանում է զգալի շափում: Վերջինք երկու սովասանջ տարիներ՝ մէկը միւսից բաժանված քսանամեայ ժամանակամիջոցով, այն է 1877 և 1897 թւականները: Յանցանքների թիւը 1877 թւի դեկտեմբեր ամսին, համեմատած նախնից տարվայ հետ, աւելացաւ 380%-ով: Նոյնը տեղի ունեցաւ 1897 թւին, միայն աւելի փոքր չափով, այն է 80%-ով: Բնորոշ է և այն հանգամանքը, որ յանցանքների թիւը մեծացաւ ազգաբնակչութեան այն մասում, որ զգալի կերպով վնասվել էր սովից, օրինակ, երկրագործութեամբ և ուրիշ մանր գործերով զբաղողների շրջանում. իսկ առեւտրական և գործարանատիրական դասակարգի մէջ ոչ միայն չը բազմացան յանցանքները, այլ և մի աննշան աստիճանով դեռ պակասեցին:

Աւերմն սովը ոչ միայն քայքայում է ազգաբնակչութեան ֆիզիքական վիճակը, ոչ միայն վնասում է նրա տնտեսական կենսութիւնը, այլ և ճնշող ազդեցութիւն է գործում նրա բարոյականութեան վրա, մղելով նրան դէպի յանցաւոր մտածողութիւն և յանցաւոր գործունէութիւն: Այնտեղ, ուր հացի խնդրի անհրաժեշտ պահանջն է հանդէս գալիս, բարոյականութեան զգացմունքներն սկսում են փորձանքի ենթարկվել և տատանվել և շատ անգամ էլ ստիպված են լինում ընկձվել և տեղի տալ... Ճշմարիտ է, Ժողովրդի բարոյական հասկացողութիւնները ուժգին կերպով մաքրուում են ազգաբնակչութեան և սովի յանցաւոր թիւը: Գործութիւնների դէմ, բայց մեծ մասամբ ընկձվում են ծայրայեղ անհրաժեշտութեան դէպքում:

Մեր երկրում, ճիշդ է, մենք չենք հանդիպում համաճարակ և կատաղի սովի, բայց

վրա և պատրաստվում էր դուրս տանել վրանից: Ահից ու սարսափից ազլած մայրն այժմ միայն ուշքի եկաւ և վազելով կորեց տարածված այցելուի առաջը. բայց վերջինի ընկերը հրացանի կոթով մի սաստիկ հարուած տվեց խեղճ կնոջ դիմին, և երկու չարագործն էլ անմեղ գոհի հետ անբերոյեանք բազմաթիւ վրանների մէջ: Մի քանի րօպէից յետոյ նրանք արդէն Օմար աղայի վրանի մօտ էին:

III

Վրանում շտապ քայքայում ման էր գալիս մի միջին տարեկան մարդ: Նա մերթ մօտեցնում էր վրանի մուտքին և, բարձրացնելով վարագոյրը, նայում էր դէպի միւս վրանները, բայց, տեսնելով, որ ոչինչ չէ երևում, մոռնում էր, նրա հաստ չրթունքները անհամբերութիւնից դողդողում էին, մերթ պակասում էր անկողնի վրա, բայց այնտեղ ևս երկար չը կարողանար լինել, կրկին սկսում էր չափափել վրանի երկարութիւնը: Բայց սահման վարագոյրը կամայ բարձրացաւ և մեղ ծախսով չարագործներից մէկը ներս բերեց Մարիամի անողջացած մարմինը և, զըռչուլթեամբ դնելով անկողնի վրա, դուրս եկաւ: Արդէն արիւնաբոս գալանի նա յարձակվեց անմեղ օրիորդի վրա, նրա պիղծ ձեռքերը սկսեցին շոշափել անբաղի կոյսի մարմինը: Նա հասաւ նպատակին...

IV

Կեռ լեռները և հովիտը պատած էին վաղորդեան մշուշով, երբ ամբողջ Մարիամը խելագարի նման անցնում էր մի նեղ, հարկա նշմարվող շաւիղով: Նրա մազերը ցրված էին: Նա գնում էր, չը նայելով շուրջը, կարծես մի շտապով, անցնաճղելի գործ սպասում էր նրան: Երբեմն միայն նա կանգնում էր ու ահանջ դնում, չը լսելի թէ նրան հետևում են, բայց ձայն չէր լսվում: Թանկարծ նրա ականջին դիպաւ մի ինչ որ որոտոտունք: Նրա դէմքը փայլեց ուրախութիւնից, և նա դիմեց դէպի այն կողմը, որտեղից գալիս էր ձայնը: Այն կողմը հարկաւոր էր գնալ մի շտապ դուռար ճանապարհով, որը խնկելով

չենք էլ կարող պարծենալ, թէ բարեկեցութիւնը համատարած է և ընդհանուր: Կովկասի զանազան մասերը իւրաքանչիւր տարի աւելի կամ պակաս չափով վնասվում են անբերրութիւնից և ուրիշ պատահարներից, որի հետեանքը լինում է ազգաբնակչութեան աղքատութիւնը: Մենք չենք կարող և չը պէտք է հաշտվել այն մտքի հետ, որ սովը անխուսափելի պատուհաս է: Այ, մենք կարող ենք մաքսանել և պէտք է մաքսանել ազգաբնակչութեան աղքատութեան դէմ: Այդ աղքատութիւնը մեզինց խլում է Ժողովրդի առողջութիւնը, նրա ապագայ զարգացման յոյսը, նրա արդիւնաբերական բարբառաւածութիւնը, և վերջապէս նրա բարոյական մաքրութիւնը: Աղքատութիւնը լքեցը նուազ է ոչ միայն փողոցները մուրացկաններով, այլ և բանտերը յանցաւորներով:

ՆՈՐԻՑ ԱՆԲԵՐՐՈՒԹԻՒՆ

Կարմիր Խաչի ընկերութիւնը տպագրել է մայրաքաղաքի լրագրներում մի յայտարարութիւն, որից երևում է որ այս տարի ևս Ռուսաստանի մի քանի նահանգներ սաստիկ վնասվել են անբերրութիւնից: Կազանի, Սամարայի, Սարատովի, Սիմբիւրսկի, Ուֆայի, Պերմի, Վեստոկայի և Բեազանի նահանգներ այս տարի աւելի շատ են վնասվել, քան անցեալ տարի: Թէև կառավարութիւնը և տեղային գեներալները արդէն մի շարք միջոցներ են ձեռք առել վնասվածներին օգնելու համար, բայց Կարմիր Խաչի ընկերութիւնը, նկատի առնելով, որ օգնութիւն չեն ստանալ բոլոր վնասվածները, հրաւեր է կարողում նուիրատուութիւններ անել, որպէս զի ինքը կարողանայ օգնութեան հասնել ազգաբնակչութեան, բաց անելով ճաշարան-

լեռան վրայից, կորչում, անհետանում էր միջին անդունդում: Չը նայելով, որ խիտ բուսած մացառները պատուում էին նրա շրթերը, ծրտատում էին մարմինը, բայց նա կարծես ցաւ չը զգարով, աւելի և աւելի արագ էր քայլում: Կէս ժամից յետոյ Մարիամը կանգ առաւ. նրա առջևը հոտում էր գետը, զարկելով իր վճիտ ջրերը ափերի ծայրերին և հաստաբուն ծառերին: Նրա ձայնը արձագանք էր գտնում նեղ և խոր անդունդում և սաստիկ որոտում էր՝ սարսուռ պատճառելով անցորդին...

Մարիամը վճեց ընկնել գետը և այդպիսով վերջ դնել իր դժբաղդ կեանքին: Բայց մի ինչ որ զգացմունք, կարծես, թող չէր տալիս նրան կատարել այդ ինքնասպանութիւնը: Նոյն իսկ գետի վճիտ ջրերը, կարծես, տրամադիր չէին ընդունել իրանց սառը ծոցում մի այդպիսի չընաղ մարմինը: Նրանք գոռում-գոչում էին, կամենալով գէթ այդպիսով իմացնել իրանց դժգոհութիւնը: Մարիամը տատանվում էր, նրա մէջ կատարվում էր մի ներքին կռիւ. անարգված պատիկի զգացմունքը մարտնչում էր երկտասարդ կենքի հետ, որ դեռ երկել լի էր յայտնելով: Ամբողջ անցաւոր պատկերացաւ Մարիամի առաջ. նա մտաբերեց իր մանկութիւնը, իր քայքայ ազատ օրերը, երբ դեռ բոլորովին ծանօթ չէր առօրեայ հոգսերի հետ... Բայց յանկարծ մտաբերեց և երկվայ անցքը. նրա շրթութիւնները զոգացին, աչքերը փայլեցին կատաղի կրակով. պատիւն յաղթող հանդիսացաւ Մարիամը վերջին անգամ մի խուլ հառաչանք արձակեց և նետվեց կատաղի պտույթի մէջ...

Երեկոյեան դէմ մամուլապատ ափի վրա ընկած էր մի դիակ, որը ալիքներն էին դուրս դրել: Դա Մարիամի մարմինն էր. ջրային բոյները, փաթակով լուր մաղբին, հիւսել էին դիակի շուրջը մի պտակ, որը նրան յաւերժանարտ էր նմանեցնում. երեսի վրա նկատելի էր դառն, հարցական ժպիտ, որով նա կարծես կամենում էր հարցնել՝ զինչով էի մեղաւոր... Լ. Վայտնի

ներ, հիմնարկելով աղքատներին խնամող հոգաբարձութիւններ, բժշկական օգնութիւն հասցնելով հիւանդներին և այլն: «Միջոցներ շատ են հարկաւոր, ասում է ընկերութիւնը, որովհետեւ պէտք է օգնել ազգաբնակչութեան ամբողջ ձեռքով ընթացում: Կարծիր Քաշի ուսուցչ ընկերութիւնը դիմում է ուսու մարզկանց գրքարարութեան և խնդրում է տալ իր լուծման քաղցած և տանջող մերձաւորներին օգնելու համար»

Նուիրատուութիւններ ընկերութիւնն ընդունում է ամեն տեղ, ուր կան Կարծիր Քաշի հիմնարկութիւնները: Գլխաւոր վարչութիւնը գտնվում է Պետերբուրգում, ուր նոյնպէս կարելի է ուղարկել նուէրներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հ Ն Ռ Ա Գ Ի Ի Ն Ե Ր

Մեր ստացանք Արեւիկ, սեպտեմբեր 18/30-էջ հետեւեալ հեռագրերը, որով Անդրեաս Արծրունու մասին հարգուած են լրացուցիչ տեղեկութիւններ:

«Անդրեաս Արծրունին մեռաւ 51 տարեկան հասակում (նա ծնվել է 1847 թրււին, նոյեմբերի 15-ին Սօսկիայում): 1864-ին աւարտելով Փիլիսի գիմնազիան՝ մտաւ Պետերբուրգի համալսարանը, որտեղից 1868 թրււին անցաւ Հելսինկինգի համալսարանը: 1870-ին աւարտեց դոկտորի քննութիւնը ասլով ընկալելով: 1875—1877 թրւականներին նա աւիստեոս էր Ստրասբուրգում: 1877—1883 թրւականներին պրիվատ-դոցենտ Գերմանիայի ամենամեծ համալսարանում՝ Բերլինի համալսարանում, 1883—1884-ին էկտորօրդինար պրոֆէսոր Բրեսլաւի համալսարանում, 1884—1898 թրւականներին օրդինար-պրոֆէսոր Արեւիկ րարձրագոյն տեխնիկական դպրոցում: Արծրունին լայն է ընծայել մինչև 50 գիտական գրուածքներ, որոնցից նշանաւորներն են՝ բնութիւնների ֆիզիքական ընկալի վերաբերեալ աշխատութիւնը, նեֆրիտների, դաղէրանների մասին գրուածքները, հետազոտութիւններ օրգանական քարայրած մարմինների մասին և այլն: Ընտրելով Արծրունու՝ գտնված է նոր միներալների մի ամբողջ շարք, որոնք են ց եր մ ե վ ի ա, մ ան դ ա ո ս ա ն ա լ ի ա, ոււ ա հ ի ա, քր օ մ ա տ ւ ւ ւ ւ լ ի ա, և այլն: Նրա հաւաքածուները, որ ժողովրդած են Ուլալում, Կովկասում և Բրիտանական Կիլիսիայում (Ամերիկա) ձանապարհորդած ժամանակ, գտնվում են ներկայումս Արեւիկ պոլիտեխնիկում մէջ: Արծրունին ընտրված էր թ ղ թ ա կ կ ր ց -ան դ ա մ Տուրինի արքայական ակադեմիայի, Բրէժնի աշխարհագրական ընկերութեան, Ուրալեան Բնագիտական ընկերութեան (վերջում պատուաւոր անդամ), Պետերբուրգի Կայսերական ակադեմիայի, պատուաւոր անդամ՝ Պետերբուրգի Կայսերական մենթորոգիական ընկերութեան, և անդամ ուրիշ շատ ընկերութիւններին»:

ՀԱՅՈՑ ԿՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Привозимый Край» լրագիրը, առաջ բերելով 1897 թրււ յունիսի 2-ին կայացած օրէնսդրութիւնը հայոց եկեղեցական դպրոցների մասին, որ արդէն յայտնի է ամենքին, գրում է հետեւեալը:

«Հայոց եկեղեցական դպրոցները նոր օրէնքով ենթարկվում են լուսաւորութեան միջնորդութեան ընդհանուր հիման վրա, այսինքն այդ դպրոցների վրա տարածվում է ժողովրդական դպրոցների գերեկցիայի հակողութիւնը, որովսին նա ունի միւս, իր իրաւասութեան ենթարկված դպրոցների վերաբերմամբ: Այդ հակողութիւնը, ընդհանրապէս այն է, որ հետեւում է ուսումնական-իրթական մասին և առհասարակ դպրոցների մանկավարժական գործունէութեան, հասնաձայն նրանց ծրագրերին: Գերեկցիայի իրաւունքն է այցելել դպրոցները, հաստատել ուսուցիչներին պաշտօնի մէջ՝ հասարակութիւնների, հոգաբարձութիւնների միջնորդութեամբ, նոյնպէս և ուսուցիչներին արձակել, ընդել դպրոցները, նրանց կառավարչներից տեղեկութիւններ պահանջել և այլն:

«Հայոց դպրոցները միայն օգուտ կը ստանան ենթարկվելով գերեկցիայի հակողութեան. նրանց դրութիւնն առհասարակ կը լուսանայ և կը կարգաւորվի ուսումնական մասը, որ մինչև այդ իր ճակատագրին էր թողնված կամ կախված

էր պատահական օրդաններից: Հայոց դպրոցներին վերաբերեալ նոր օրէնքը, ինչպէս այդ երևում է նրա բովանդակութիւնից, նայ հոգևորականութեան չափազանց կարևոր ֆանկցիա է յատկացնում ժողովրդական կրթութեան գործունէութեանը: Տակեւ պատանիները կրօնական կրթութեան վրա: Հոգևորականութեան այդ արտօնութիւնը, ի հարկէ, կը պահպանէ հայոց եկեղեցական դպրոցների ընաւորութիւնը, կերպարանը, որովհետև նրանք առաջվայ պէս մընում են եկեղեցու կառարեալ հոգացողութեան տակ: միջնորդութեան կողմից սահմանված նրա կողմից հետ վաւերացված է և նայ հոգևորականութեան մասնակցութիւնը ուսումնական մասի մէջ, որ բաղկացած է նաև կրօնի և հայոց լեզուի դասններից: Այսպիսով նոր օրէնքով էլ այդ դպրոցները մնում են եկեղեցիների, ծուխների հիմնարկութիւն. սրանց նախաձեռնութեամբ են դպրոցները գոյութիւն ստանում, սրանց հոգսերով են պահվում թէ նրկապէս և թէ բարոյապէս: Այստեղից դուրս է գալիս, որ անցնելով ժողովրդական միջնորդութեան հայոց եկեղեցական դպրոցները պահպանում են իրանց կազմակերպութիւնը առաջվայ դրութեան մէջ: Ուսուցչական խումբը, գլխաւորապէս ուսուցչական և թուարանութեան ուսուցիչները 1897 թրւ օրէնքով առաջարկվում է պատշաճաւոր հիմնարկութեան և նրանց վրա հաստատվում է կառավարչական հակողութիւն, որը մի երաշխաւորութիւն է թէ դպրոցների կառավարչները և ուսուցիչները իրանց պարտաւորութիւններին հարկաւոր ուշադրութեամբ և բարեխնդութեամբ կը վերաբերվեն:

«Նոյն վերաբերվում է հայոց եկեղեցական դպրոցների հոգաբարձութիւններին, որպէս այնպիսի մարմիններին, որոնք աւելի մօտիկաց մըշտապէս հակում են այդ դպրոցների վրա, դրանք էլ նոր կարգերի մէջ մնում են և գործում են իրանց խնամքին յանձնած դպրոցների օգտին: Նոյն ըստ ինքեան հակումալ է, որ նիկասի անհեղձ հոգևորականութեան պարտաւորութիւնը—Տակեւ պատանիների կրօնական բարոյական կրթութեան գործին, անհրաժեշտ է որ թեմական առաջնորդները և յայտնիները նոյնպէս շարունակեն առաջվայ նման ընելիք դպրոցները, որովհետև միայն այդ միջոցով կարելի է իրագործել այն իրաւունքը, որ յատկացրած է հոգևորականութեան նոր օրէնքով: Սա ոչ միայն իրաւունք է, այլ և պարտաւորութիւն, մի բարձր, սուրբ պարտաւորութիւն, որից չէ կարելի խոյտ տալ:

«Այս բոլորից յետոյ պէտք է գալ այն եղբակացութեան, որ հայոց եկեղեցական դպրոցների մասին հրատարակված նոր օրէնքը իր էութեամբ հաստատում է հետեւեալ կարգը. ժողովրդական միջնորդութիւնը ժողովրդական դպրոցների ղեկեկցիայի միջոցով հակում է դպրոցների ուսումնական մասին՝ առանձին ուշադրութիւն դարձնելով ուսուցչական դասաւարտութեան վրա. կառավարչական և հոգևորականութեան կրթական հակողութիւններն այսուհետև կարող են հասնել ամենալաւ: հետեւեալների և դրանով նըպաստել դպրոցական գործի ծաղկմանը:

Այսուհետև լրագիրը խօսելով հայոց դպրոցների կայքերի մասին, ասում է որ 1897-ի օրէնքը դպրոցների անտեսական մասը ամբողջովին թողնում է եկեղեցիներին, ուստի և նրանց կայքերի գրաւումը, որ տեղի ունի Անդրկովկասում, նա համարում է ժամանակաւոր, վարչական կարգաւորութիւն: Լրագիրը հաստատապէս տեղեկացնել է, որ ժողովրդական միջնորդութիւնը հրամանագրելով մտցնել նոր օրէնքը նաև Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմում, ոչ չէր կարգաւորութիւն չէ արել եկեղեցական դպրոցների կայքերի մասին:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Ռ Ի Թ Ի Ն

«Ռուս-վրացերէն հանրագիտական բառարան», խմբագրեց և հրատարակեց Նվանե Ռոստոմաշվիլի, մասն 1, տաւ Ա, 192 էրես, թիֆլիս, 1898 թ.

Մինչև այսօր վրաց ընկերացող հասարակութիւնը բոլորովին չէր կարողանում վրաց լեզուով գրութիւն ունեցող բառարանների մէջ որ և է հարկաւոր տեղեկութիւն գտնել գիտութեան, պատմութեան, կամ պատարհագրութեան վերաբերութեամբ: Այդ պակասն այսօր լրանում է յիշեալ հանրագիտական բառարանի հրատարակութեամբ, որը թէպէտ գուրկ չէ պակասութիւններից, ինչպէս ինքը խմբագրողն էլ խոստովանում է, բայց այնու ամենայնիւ նշանաւոր աշխատութիւն է: Խմբագրողը մի տեղ է հաւաքել այս ու այն կողմ ջրված տեղեկութիւնները վրաց և օտար երկիրների մասին և

հանրամատչելի է դարձրել ամենքի համար: Ամենից շատ տեղեկութիւններ տալիս է վրացաւորներ, նրա թագաւորներ, վանքերի, գետերի, լեռների, լճերի, բնակիչների, կենդանիների մասին և այլն: Բառարանի մէջ կան և հայոց մասին տեղեկութիւններ, բաղված ուսուցչական լեզուով եղած հանրագիտական բառարաններից, բայց, տարաբաղաբար, շատ քիչ: Խմբագրողը աչքի առաջ է ունեցել այն հանգամանքը, որ վրաց մէջ ուսուցչական լեզուներ աւելի շատ են, և աւելի շատ կարող են օգտվել և բացի դրանից, վրաց լեզուով բոլոր բառերը դժուար է արտայայտել, այդ պատճառով բառարանը կազմել է ուսուցչական-վրացերէն. առաջ ուսուցչական և ապա վրացերէն է: Բառարանի նոր հրատարակութիւնը շատ ուրախալի երևելով է, բայց, տարաբաղաբար, վրացիները նոր բան չուտով չեն կարողանում ընդունել և նրանից օգուտ քաղել, այդ պատճառով վրաց լրագրութիւնը միաբերան սկսեց անասելի հայոցալեզուներ թափել պ. Նվ. Ռոստոմաշվիլի վրա և նրա այդ գործը ասն օ գ ու ս ա շ ի խ ա տ ա ն ք ա անտանց, բայց թէ ինչու, կամ ոչ ոք չը կարողացաւ, կամ չուզեց ապացուցանել: Բառարանը բաղկացած կը լինի 15—16 հատորից, որոնք լայն կը տեսնեն 3—4 տարվայ ընթացքում: Բոլորի գիտը 12-ր: Ցանկալի է, որ ապագայում լայն տեսնող հատորները հարուստ լինեն հայոց մասին պատմական, գիտական, աշխարհագրական և այլ տեղեկութիւններով և հայոց աղբիւրներից քաղած, որպէս զի վրացիները կարողանան իրանց հարեան ժողովրդի մասին ճիշդ գաղափար կազմել:

ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՄՍՍԻՆ
(Նստակ գաւառից)

Ինչպէս մասնաւոր անհատների վերաբերմամբ է ասվում՝ ասուող մարմին մէջ ասուող հոգեւ, նոյն բանը համարձակօրէն կարելի է կրկնել նաև ամբողջ ազգերի մասին, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ հաւաքական ընդհանուր մարմին՝ բաղկացած մասնաւոր անհատներից: Աշխարհիս երեսին այն աղբերն են դրեղ և կարող, որոնք բաղկացած են առողջ և ամուր կազմուածքի տէր անդամներից: Եւ ընդհակառակը՝ այն աղբերը, որոնք բաղկացած են թուլ և վատառողջ անդամներից, նրանք ժամանակի ընթացքում անխուսափելի կերպով կորչում՝ անհետանում են, առանց նշանաւոր տեղ բռնելու պատճառութեան էջերում: Հետեւապէս, մի ազգ, որ ցանկանում է իր գոյութիւնը յարատեւել և առաջադիմել, նա պիտի լուրջ ուշադրութիւն դարձնէ ժողովրդի առողջութեան վրա, ապա թէ ոչ, նա կը սկսէ հետզհետէ նուազել և վերջ ի վերջոյ խոպաւ կը ջնջվի աշխարհիս երեսից:

Իսկ թէ որքան քիչ են մտածում մեզ մօտ ժողովրդի առողջութեան մասին, այդ բանը պարզ երևում է այն հանգամանքից, որ մեզանում հարկաւոր դրեղներ, նոյն իսկ գաւառական նշանաւոր կենտրոններ՝ զուրկ լինելով բժշկական օգնութիւնից, մատուցում են անարագէտ հէքիմները, տղէտ դաւլաքները և խաբեբայ գը բացները կամայականութեամբ: Մեր ինտելիգենցիան շատ անհոգ է այս խնդրի վերաբերմամբ: Միանգամայն արդարացի է երկրատասարդ բժիշկները ղէմ բարձրացրած այն բողբոջը, թէ նրանք խոյս են տալիս դրեղների՝ չեն ուղղում մտնել խաւար ամբոխի մէջ, որտեղ ամենից աւելի կարևոր է նրանց ներկայութիւնը:

Եւ ասա՛ չնորհիւ մեր մէջ տիրող յանցաւոր անտարբերութեան, արդէն լայն են դրել մեր դիւղերում գանալան կրտսեղներ հիւանդութիւններ, որոնց թուում և սիֆիլիսը՝ մարդկութեան այդ ահաւել թշնամի: Սիֆիլիսը տեղական աղքատաւորութեան մէջ յայտնի է ֆրանց-դաս-մաթի անունով, որը թարգմանաբար նշանակում է ֆրանսիական-ախտ: Մերք ձանաչում ենք Սուրբաբուր գաւառում թէ հայաբնակ թէ թուրքաբնակ դրեղներ, որոնցից մի քանիսը արդէն կիտով չափ վարակված են սիֆիլիսով: Ոսկրամափ, տափակած ըլլեր, խոպոտ՝ հալիլսելի ձայնի, յօնքաթափ գէպերը—ասա թէ ինչ կը պատկերաբար այդ դրեղները՝ ձեր առաջ... Վարակված դրեղեր ձանաչում ենք նաև էջմիածնի ու Հին-Նախիջևանի գաւառներում և նրանց թուր՝ դժբաղաբար, քիչ չէ: Եթէ սիֆիլիսը մուտ է գործել վերոյիշեալ գաւառների մասն իսուլ տեղերը, երևակայեցէ, թէ ինչ դրութեան մէջ կը լինի կենտրոնական բազմամարդ բաղաճները, որտեղ կենտրոնարկների մեծամասնութիւնը անձնատուր է զրկել ու անբարոյական կեանքի, և որտեղ սիֆիլիսի տարածման համար շատ նպաստաւոր պայմաններ կան: Իսկ քաղաքները վարակված լինելով նրանց հարեան գիւղերը չեն կարող պաւա մնացած լինել:

Այդ ախտը կրկնում ենք, մեզ մօտ այնքան տարածված է, որ առանց վնասական միջոցների դիմելու՝ անկարելի է նրան արմատախիլ անել: Իսկ եթէ մենք անկարող ենք միջոցներ գործադրել սիֆիլիսին դիմադրելու, գոնէ հոգ տանենք, որ այդ սարսափելի ախտը նորանոր դոհեր չը խլէ մեզանից:

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Սեպտեմբերի 16-ին
Երէկ, Կարսի ուսումնարանական շրջանի տեսիլ իշխանութեան ներքոյ, բայցվեց այստեղի հայ-կաթիլիկների միջատեան ծխական երկեսու դպրոցը, եկեղեցուն կից նոր շինութեան մէջ: Կրթնով մենք պարտական ենք նոր նշանակված Կարապետ վարդապետի ետանդուն գործունէութեան, որի առաջին հոգը երաւ կրկու սեռի մանուկների կրթութիւնը: Ուրախալի էր տեսնել, թէ ինչպէս ուսման առաջին օրը՝ մանուկները հաւաքված մէկ յարկի տակ՝ ուրախանում էին ուսումնարանի բայման հանդէսով և հրճվում էին ուսուցչու և ուսուցչուհիների շքեղապատված: Վերջապէս հայ-կաթիլիկ տարրն էլ զարկնեց իր ընդ, դուրս եկաւ խաւարի մշուշից և համարկեց, որ անհրաժեշտ է ունենալ ուսումնարան, ուր կարելի է թոյլ տալ աղջիկ և տղայ երեխաներին միտան սովորելու: Ուսումնարանը երկու մեծ սենեակներ ունի. ընդունվել են 75—80 աշակերտ և աշակերտուհիներ: Թէև ցանկացողներ թիւը չափազանց շատ էր, բայց նախ տեղի փոքրութեան պատճառով չընդունվեցին և երկրորդ՝ եկեղեցին առ այժմ անկարող է մի ուսուցիչ ևս աւելացնել: Հայերէն լեզուի և կրօնի դասերը յանձն առաւ ամենողիւ ինքը Կարապետ վարդապետը: Աշակերտուհիների ձեւապարժի դասերը յանձնված են Արդուխից հըբաւիրված երկու միանձնուհիներին, որոնք իրանց կրթութիւնը ստացել են Վ. Պօլտում և յայտնի են իբրև համեստ ուսուցչուհիներ: Ռուսաց լեզուի, թուարանութեան և այլ դասերի համար հրաւիրված է Թէոդոսիա քաղաքից օրիորդ Գայլանէ Բարսեղեան, որն ունի գիմնալայի աւարտման վկայական և Արդուխում եղած ժամանակ բարեխնդութեամբ և կատարել իրան յանձնված պաշտօնը և արժանացել ժողովրդի յարգանքին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԻՆԻ

Մեր քաղաքի ցանկալի հիւրը՝ Նորին Բարձրութիւն Մեծ Նշխան Միխայիլ Նիկոլայիվիչ շարաթ օր, սեպտեմբերի 19-ին, մեկնեց թիֆլիսից Բորժոմ: Երկաթուղու կայարանում հաւաքված էին զինուորական և քաղաքացիական իշխանութեան ներկայացուցիչները: Արքայական սենեակներում Նորին Բարձրութեան սպասում էր Կովկասեան կառավարչապետի ամուսինը՝ իշխանուհի Գոլցինա, ուրիշ տիկիներն հետ միասին: Երբ Մեծ Նշխանը հրաժեշտի լողջոյն տուեց իշխան կառավարչապետին և միաներին ու մտաւ վաղօրե, օրը թնդաց ողբերգիված ատարներով: Ցերեկվայ 3 ժամն էր, երբ գնացքը շարժվեց դէպի Բորժոմ:

Շարաթ օրը, սեպտեմբերի 19-ին, պրոֆեսոր Գոլուչայի Կովկասեան Կիւլանտեանական ընդկերութեան մէջ կարգաց մի դիկուրում Կովկասի հողերի յատկութեան մասին: Նրա դիկուրման նշանաւոր կէտն այն է, որ մեր լեռնադաշտերում գտնվող սևահող համարում է բոլորովին նման Ռուսաստանի ներքին հասնիցների նշանաւոր սևահողին: Ուրիշ խօսքով՝ Ալեքսանդրօպոլիսի, Ախալքալաքի, Նոր-Բայազէտի գաւառների սեւահողը նա համարում է նոյնպիսի սևահող: Իր կարծիքը նա հաստատում է նախ տեսակաւորապէս՝ համեմատելով լեռների վերքի և ներքերի մասերը երկրաբանութեան և տաք գոտիների հետ, և երկրորդ՝ գործնականապէս՝ հետազոտելով սևահողերի ֆիզիքական և ընկալական կազմաւածքը: Պրոֆէսորը յայտնեց, որ ինչպէս Ռուսաստանի հիւսիսում չը կայ սևահող և նա երևում է յայտնի գոտիում և ապա անհետանում աւելի հարաւում, այնպէս էլ Կովկասում սևահող չը կայ ոչ սարերի ծայրում և ոչ տափարակում, այլ միջին շրջանում, լեռնադաշտերում: Կասախօսութիւնը գրաւել էր մեծ հասարակութիւն: Պրոֆէսորը խօսում է պարզ, հետաքրքրական: Կասախօսութիւնից յետոյ տեղի ունեցաւ վիճարանութիւն, որից պ. Գոլուչայի օգուտեց աւելի ևս մանրամասն պարզելու իր հայեացքները հողի կազմութեան և Անդրկովկասի սևահողի մասին:

Շարաթ, սեպտեմբերի 19-ին, երկկոյնեան ժա-

„სტალი“ ზეობა-ბრუნებ

ბიბლიოთეკის რედაქციის მიერ

სტალი, 19 სექტემბერი: სკოლა და სწავლა...

სტალი, 19 სექტემბერი: „Journal“ ჟურნალი...

სტალი, 10 სექტემბერი: სწავლა და სწავლება...

სტალი, 19 სექტემბერი: „Times“-ის სტატია...

სტალი, 19 სექტემბერი: ჯიქა და მისი მნიშვნელობა...

სტალი, 19 სექტემბერი: სკოლა და სწავლება...

სტალი, 20 სექტემბერი: სკოლა და სწავლება...

სტალი, 21 სექტემბერი: სკოლა და სწავლება...

ს. მსხვერპლი-ბიბლიოთეკის

Table with 2 columns: Item name and Price. Includes items like 'სტალი', 'სტალი', etc.

სტალი-ბიბლიოთეკის

სტალი-ბიბლიოთეკის მიერ

სტალი-ბიბლიოთეკის

სტალი-ბიბლიოთეკის მიერ

Advertisement for 'Глицериновое Мыло' (Glycerin Soap) with an image of the soap box.

სტალი-ბიბლიოთეკის

სტალი-ბიბლიოთეკის მიერ

სტალი-ბიბლიოთეკის

სტალი-ბიბლიოთეკის მიერ

Advertisement for 'სტალი-ბიბლიოთეკის' (Stali-Biblioteka) with contact information.

Advertisement for 'სტალი-ბიბლიოთეკის' (Stali-Biblioteka) with contact information.

Advertisement for 'БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ' (Brotherly help to Armenians in Turkey).

Advertisement for 'BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-іe'.

Advertisement for 'სტალი-ბიბლიოთეკის' (Stali-Biblioteka) with contact information.

Advertisement for 'სტალი-ბიბლიოთეკის' (Stali-Biblioteka) with contact information.

Advertisement for 'სტალი-ბიბლიოთეკის' (Stali-Biblioteka) with contact information.

Advertisement for 'სტალი-ბიბლიოთეკის' (Stali-Biblioteka) with contact information.